


Է

Հինգ թէ երկու լատին քաղաւոր



առեր ընդունած են թէ Կիլիկիայի հայ թագաւորներու շարքին մէջ լատինական ցեղէ հինգ թագաւոր ունեցած են Հայերը։ Այս սխալ կարծիքն առաջին անգամ հրատարակ նետողն եղած է Կիպրոսի նիկոսիա քաղաքէն Ստեփաննոս Լուսինեան անունով յոյն Դոմինիկեան կրօնաւոր մը (1537—1590), որ նախ Իտալիա եւ ետքը Պարիս ճանրորդելով Կիպրոսի մասին խոսելէն եւ Փրանսերէն մի քանի հրատարակութիւններ ըրած է, որոնց մէջէն մեզի կարեւորներն են՝ 1) Histoire contenant vne sommaire description des Genealogies, Alliances, & gestes de tous les Princes & grands Seigneurs, dont la pluspart estoient François, qui ont iadis commandé es Royaumes de Hierusalem, Cypre, Arménie, & lieux circonuoisins. Paris, 1579. եւ 2) Description de tovtte l'isle de Cypre, et des roys, princes, et seigneurs, tant Payens que Chrestiens, qui ont commandé en icelle . . . Paris, 1580.

Արդ՝ հ. Ստեփաննոս Լուսինեան այս երկու երկասիրութիւններուն մէջ ալ առանձին գլուխ մը նուիրելով Հայաստանի Լուսինեան ցեղէ թագաւորներուն, այսպէս կըսէ (1). Հայաստանի լատին ցեղէ առաջին թագաւորն եղած է 1) Հիւզ, որդին Տիւրոսի եւ Սիզոնի տէր Ամորի Լուսինեանի, որ ամուսնացած էր Հայոց թագաւոր Թորոսի քրոջ Զապրունի հետ : Հիւզ՝ Կիպրոսի թագաւոր Հանրի Բ-ի եղբայրն էր : Հիւզի յաջորդեց իր երէց որդին 2) Յովհաննէս, որ վանք մը քաշուեցաւ եւ Փրանկիսիեան կրօնաւորի սքեմ հագաւ, արքայական գահը թողլով իր եղբորորդի 3) Լեւոնի (Ա) : Լեւոն՝ Ամորիի որդին էր եւ թորը Հիւզի : Որովհետեւ ասիկա մեռաւ անզաւակ, թագաւորական իշխանութիւնն անցաւ իր միւս հօրեղբոր 4) Լեւոնի* (Բ), այսինքն Հիւզի երրորդ զաւակին, որ է եղբայր Յովհաննէսի եւ

(1) Hist. contenant եւն, քղ. 32 ք, եւ Description եւն, քղ. 201 ք :
* Որուն « Liouon » (Լիւոն) կըսէ հ. Ստեփաննոս :